

Ռուբիկ Շմավոնի Նահապետյան

Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ծնվել է 1951 ապրիլի 25-ին ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքում: Ունի երկու դուստր:

Կրթությունը

1958-66 թթ. սովորել է Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցում, իսկ 1966-68թթ.՝ ԵՊՀ կից ֆիզիկամաթեմատիկական գիշերօթիկ դպրոցում:

1968 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի Մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետը:

1973 թվականին գերազանցությամբ ավարտել է համալսարանը՝ ստանալով «մաթեմատիկոսի» որակավորում:

1975 թվականին ընդունվել է Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրան:

Աշխատանքային գործունեությունը

1980 թվականին ընդունվել է աշխատանքի Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ՝ որպես մաթեմատիկայի դասախոս:

1992 թվականին գործուղվել է ԵՐՊԻ Կապանի ուսումնա-խորհրդատվական կետ:

1997 թվականից Կապանի մասնաճյուղում աշխատել է որպես ամբիոնի վարիչ, դեպարտամենտի վարիչ, ՈւՄԱ գծով տնօրենի տեղակալ:

2013 թվականին վերընտրվել է Մաթեմատիկայի և բնագիտական առարկաների ամբիոնի վարիչ:

Գիտական և ուսումնամեթոդական գործունեությունը

Մշակել և հրատարակել է 19 մեթոդական աշխատանք:

Հեղինակ է մասնագիտական պարբերականներում հրատարակված 18 գիտական հոդվածի: